ՀՏԴ : 061.12(479.25)
DOI: 10.54503/2579-2830-2024.1(11)-256

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՀ ԳԱԱ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 80-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ 2023 թվականի դեկտեմբերի 8-ին և 11-ին գումարվեց Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասնվեցերորդ նստաշրջանը՝ նվիրված ՀՀ ԳԱԱ հիմնադրման 80-ամյա հոբելյանին:

Երկօրյա նստաշրջանի հինգ նիստերի ընթացքում ընթերցված 42 զեկուցումներում ներկայացվեցին արվեստագիտության տարբեր գիտաճյուղեր. կերպարվեստագիտություն՝ 17, երաժշտագիտություն՝ 14, ճարտարապետության պատմություն և տեսություն՝ 6, թատերագիտություն՝ 4 և կինոգիտություն՝ 1 զեկուցում:

Նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին երիտասարդ արվեստաբաններ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտից, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայից, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտից, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայից, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանից, Երևանի պետական համալսարանից, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից, Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարանից, Հայաստանի ազգային պատկերասրահից, Կոմիտասի թանգարան-ինստիտուտից, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտից, Հայաստանի եվրոպական համալսարանից, նաև՝ հինգ երիտասարդ հետազոտողներ արտասահմանից՝ Իտալիայից, Իսրայելից, Չինաստանից և Լիբանանից:

Բացման խոսքում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ **Աննա Ասատրյանը** կարևորեց երիտասարդ հայ արվեստաբանների գիտական նստաշրջանների դերը հայ արվեստագիտության, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի պատմության մեջ: «Ավանդական դարձած Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական յուրաքանչյուր նստաշրջանից հետո մենք տեսնում ենք, թե ինչ ներուժ ունի արվեստագիտությունը: Մենք իսկապես ունենք արժանի հերթափոխ», - ասաց Աննա Ասատրյանը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Դանիել Դանիելյանը,** ողջունելով նստաշրջանի մասնակիցներին, ասաց. «Շատ եմ կարևորում այսպիսի նախաձեռնությունները, մշակույթը, ըստ իս, առանցքային 3 հարթակով է առանձնանում: Առաջինը՝ գիտական աստիճանն է, գիտական պահպանության այն աստիճանը, որտեղ մենք գտնում ենք, փոշուց հանում և պահպանում ենք մեր ունեցած արժեքները: Այդ պահպանման գիտական հարթակը մեր բարձրագույն ինստիտուտուցիոնալ հաստատություններն են, այն բոլոր կազմակերպությունները, որոնք զբաղվում են գիտական գործունեությամբ: Գիտական այս կարևոր հարթակը հնարավորություն է տալիս երկրորդ և երրորդ հարթակներին գործել: Երկրորդը՝ կատարողական հատվածն է, որը հիմնված է գիտականի վրա, և երրորդը՝ հանրահռչակման, ներկայացուցչական մասն է: Վերադառնալով գիտականին, որում դուք եք, ոչ միայն պետք է առողջ և ուժեղ պահենք, այլ պետք է անընդհատ զարգացնենք այն: Պետք է այնպես անել, որ այդ գիտական աշխատությունները ուղիղ կապով ուսումնական հաստատությունների հետ լինեն, երբ ուսանողն անդրադառնա այս կամ այն հարցին՝ ձեր գիտական աշխատություններն առնչվեն իր կրթության հետ»:

ՀՀ ԳԱԱ Երիտասարդ գիտնականների միավորման նախագահ **Սիրանուշ Հովհաննիսյանը,** ողջունելով և շնորհավորելով նստաշրջանի մասնակիցներին, նշեց. «Մեր առաջ շատ լուրջ խնդիրներ կան ծառացած և մեծ պարտավորություն՝ մենք պետք է կարողանանք այնքան ճկուն լինել, որ նախ ճշգրիտ արժևորենք արվեստից և մշակույթից մեզ բաժին հասած ժառանգությունը, գնահատենք և բարձրացնենք գիտության մակարդակը: Շնորհակալությունս եմ հայտնում մեր ավագ սերնդի գործընկերներին, որոնք բոլոր իմաստներով աջակցում, սատարում են մեր ցանկացած նախաձեռնություն և վստահեցնում եմ ձեզ, որ դուք ունեք իսկապես արժանի հետնորդներ և մենք գնահատում ենք ձեր կատարած գիտական աշխատանքը»:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Աննա Ասատրյանը ներկայացրեց 2023-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակված «Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական նստաշրջանի նյութեր» նորաստեղծ գիտական պարբերականը:

ԿԵՐՊԱՐՎԵՍ: Գեղանկարիչ Գրիգոր Շլդյանի կյանքի և ստեղծագործության հետազոտմանն էր վերաբերում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտքարտուղար, արվեստագիտության թեկնածու **Մարգարիտա Քամալյանի** զեկուցումը:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Մարտին Հարությունյանը** հանդես եկավ «Կրթական համակարգը Ֆրանսիայի արվեստի բուհերում» վերտառությամբ բանախոսությամբ: Հեղինակն ուսումնասիրել էր Ֆրանսիայի Սենտ-Էտյեն քաղաքի 2 բուհերը՝ ESADSE և Université Jean Monnet և արձանագրեց կրթական որոշ առանձնահատկություններ, որոնք հնարավոր է ներդնել Հայաստանի արվեստի բուհերում և առաջարկեց կատարել հետազոտություն՝ միտված հայաստանյան արվեստի բուհերի խնդիրների վերհանմանն ու եվրոպական մոդելի ծրագրերի կիրառմանը:

«Վանի թագավորության ծիսակարգերի գեղարվեստական մեկնությունը կնիքների դրոշմվածքում» զեկուցման մեջ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Գայանե Պողոսյանն** անդրադարձավ կնիքների գեղարվեստական հարդարանքում ներկայացված սյուժեներին, որոնք թույլ են տալիս որոշակի պատկերացում կազմել կնիքների պատկերագրական, խորհրդաբանական առանձնահատկությունների մասին, ինչպես նաև հնարավորություն են ստեղծում պատկերաընթերցման շնորհիվ լրացնել Վանի թագավորության կրոնական ծիսակարգերի վերաբերյալ բացակայող գրավոր տեղեկությունները:

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի դասախոս, արվեստագիտության թեկնածու **Նարե Նադարյանը** հետազոտեց հայ քանդակագործներ Ա. Հարությունյանի, Ա. Սարգսյանի, Ղ. Չուբարյանի, Յ. Պետրոսյանի, Դ. Բեջանյանի, Ա. Հովսեփյանի՝ հայ կոմպոզիտորներին պատկերող մոնումենտալ հուշարձանները:

«Գրիգոր Լուսավորչի պատկերը ռումինահայ սրբանկարներում» բանախոսությունը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտ և կերպարվեստի բաժնի կրտսեր գիտաշխատող **Շողակաթ Դևրիկյանը** (գիտական ղեկավար՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Սեյրանուշ Մանուկյան): Զեկուցողն արծարծեց հայոց առաջին հայրապետին պատկերող ռումինական միջավայրում ստեղծված սրբանկարները, հիմնվելով Սբ. Գրիգորի վարքագրական պատումների վրա՝ դիտարկեց յուրաքանչյուր պատկերագրական տիպի առանձնահատկությունները և վերլուծեց նրա կյանքին նվիրված սրբանկարների մանրամասները:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Մերի Կիրակոսյանը** «Փանոս Թերլեմեզյանի արվեստը Պոլսի «Շանթ» հանդեսի էջերում» վերտառությամբ բանախոսության մեջ ամփոփ ուսումնասիրեց 20-րդ դարասկզբին Պոլսում լույս ընծայվող «Շանթ» կիսամսյա հանդեսը, անդրադարձավ շաբաթաթերթի էջերում ներկայացված Թերլեմեզյանի ստեղծագործական գործունեության հետ կապված նորահայտ փաստերին և նկարչի այն աշխատանքներին, որոնք չեն հասել մեզ և տպվել են «Շանթի» էջերում:

«Մերկ մարմնի ընկալումն անտիկ արվեստում» զեկուցմամբ ներկայացավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Մանե Մկրտչյանը**: Բանախոսը շոշափեց հունահռոմեական բոլորաքանդակում մեծ տեղ գրավող մերկ մարմնի խնդիրը և առանձնացրեց թեմայի հետ կապված 3 հիմնահարց, որոնք վերաբերում էին մերկ մարմնի պատկերման ժամանակ սե-

ռային տարբերություններին, արտահայտչականությանը և կերպարին օժտած գծերին:

Երևանի պետական համալսարանի դասախոս, արվեստագիտության թեկնածու **Հռիփսիմե Վարդանյանը** «Շարժանկարի ազդեցությունը Վալենտին Պոդպոմոգովի գեղանկարչության վրա» զեկուցման շրջանակում հետազոտեց խաղարկային և մուլտիպլիկացիոն ֆիլմերի բեմադրիչ, նկարիչ, գրաֆիկ Վալենտին Պոդպոմոգովի գեղանկարչական ստեղծագործությունները և դիտարկեց վերջինների վրա շարժանկարի ազդեցության հարցը:

Հայաստանի ազգային պատկերասրահի գեղանկարչության բաժնի ղեկավար, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի հայցորդ **Հայկուշ Սահակյանը** (գիտական ղեկավար՝ արվեստագիտության թեկնածու Արթուր Ավագյան) հանդես եկավ «Գերմանիան և հայ արվեստագետները» զեկուցմամբ, որտեղ ներկայացրեց Գերմանիայում կրթություն ստացած և ցուցադրված հայ արվեստագետներին, քննեց դեպի Գերմանիա նրանց ուղղորդած շարժառիթներն ու պատճառները, կարևորեց հիշատակել այն հայ նկարիչներին, ովքեր Գերմանիայում կազմակերպված տարբեր միջազգային ցուցահանդեսներին արժանացել են պարգևների և պատվոգրերի:

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի աշխատակից, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտ **Ռուզան Անանյանի** (գիտական ղեկավար՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյան) «Ռաֆայել Շիշմանյանի կերպարը հայ կերպարվեստում» բանախոսության մեջ վերլուծվեցին գեղանկարիչ և արվեստաբան Ռաֆայել Շիշմանյանի կերպարին անդրադարձած հայ գեղանկարիչների աշխատանքները:

«Ռուս վիդեոնկարիչների նոր սերունդ. համաշխարհային և հայրենական արտբեմի ժառանգորդները» զեկուցման մեջ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ասպիրանտ **Աննա Սապոժնիկովան** (Ռուսաստան-Իսրայել) (գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյան) հեռավար ձևաչափով քննեց նկարիչների ստեղծագործության մեջ վիդեոարտի զարգացման ընդհանուր միտումները, հետազոտեց ռուս երիտասարդ նկարիչների կիրառած ստեղծագործական մեթոդները, գեղարվեստական մարտավարությունը և բացահայտեց նրանց աշխատանքների առանձնահատկությունները:

Նանկինի Մանկավարժական համալսարանի դասախոս **Անի Մարգարյանի** (Չինաստան) «Հովսեփ Փուշմանի նատյուրմորտների խորհրդաբանությունը և պատկերագրական լեզուն» հետազոտության նպատակն էր բացահայտել սփյուռքահայ արվեստագետի ստեղծագործության մեջ առկա խորհրդանշական ենթատեքստերը, հորինվածքային դասավորության և դետալների տեղաբաշխման հիմքում ընկած սիմվոլիկան ու բազմաբովանդակ պատկերագրական լեզուն:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի հայցորդ **Լիլիթ Կարապետյանի** (գիտական ղեկավար՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Զարուհի Հակոբյան) «Ուշ միջնադարյան պատկերաքանդակը. պատկերագրական առանձնահատկությունները, գլխա-

վոր կենտրոնները» զեկուցման մեջ ներկայացվեցին ուշ միջնադարյան հայկական պատկերաքանդակի զարգացման գլխավոր կենտրոնները և կարևորվեցին եվրոպական ու ազգային մշակույթների միջև միջնորդ հանդիսացող գաղթօջախների հայկական հուշարձանների օրինակները:

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի ասպիրանտ **Օֆելյա Ազիզյանը** (գիտական ղեկավար՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Քնարիկ Ավետիսյան) անդրադարձավ սյունիք-արցախյան տարազի պատկերագրական դրսևորմանը 20-րդ դարի հայ նշանավոր մի քանի նկարիչների արվեստում, իսկ ասպիրանտ **Իրինա Շախնազարյանը** (գիտական ղեկավար՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Նազենի Ղարիբյան) հանդես եկավ «Արվեստի խնդիրը 1920-ականների մշակութային հեղափոխության ուղեծրում» բանախոսությամբ: Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի դասախոս **Նարե Սահակյանի** «Կանտականության ուշխորհրդային հմայքը. Վիլհելմ Մաթևոսյանի արվեստաբանությունը» հետազոտության առանցքում Վիլհելմ Մաթևոսյանի արվեստաբանական մեթոդն էր և կանտական սկզբունքների ազդեցությունը գիտնականի աշխատանքի վրա:

Հայաստանի եվրոպական համալսարանի դասախոս **Գագիկ Ավետիսյանը** «Հայ-ռուսական մշակութային հարաբերությունների պատմությունից. Բոգդան Սալթանով» զեկուցման մեջ դիտարկեց և ամփոփ ներկայացրեց ծագումով հայ նկարիչ Բոգդան Սալթանովի ստեղծագործական ուղին:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Լիլիթ Արտեմյանը** «Միխայիլ Կոկժաևի ստեղծագործական դիմանկարը» զեկուցման մեջ առաջին անգամ քննության առավ և համակողմանի ուսումնասիրեց կոմպոզիտորի ծավալած հիմնական՝ ստեղծագործական, գիտական և մանկավարժական ուղղությունները:

«Երաժշտական գործիքների հիշատակությունները Գրիգոր Նարեկացու բանաստեղծական արվեստում» հետազոտության մեջ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ասպիրանտ **Տիգրան Դավթյանը** (գիտական ղեկավար՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Արևշատյան) դիտարկեց Գրիգոր Նարեկացու երաժշտաբանաստեղծական արվեստը, ընդգծեց նվագարանների մասին դրանում առկա հիշատակությունները, որոնք վկայում են Նարեկացու ժամանակի նվագարանային մշակույթի իրողությունների մասին և կարևորություն են ձեռք բերում որպես հայ միջնադարյան գործիքային մշակույթի գրավոր վկայություն:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտական բաժնի ղեկավար, արվեստագիտության թեկնածու **Տաթևիկ Շախկուլյանը** հանդես եկավ «Հարգանքի տուրք քաղաքավարությանը. Komitas-ից Comitas» զեկուցմամբ: Բանախոսն անդրադարձավ նիդերլանդացի կոմպոզիտոր Էդուարդ դե Բոերին, որն իր ստեղծագործական ծաղկուն մի շրջան հանդես է եկել Ալեքսանդր Կոմիտաս

անունով: Հայաստանի հետ որևէ առնչություն չունեցող այս կոմպոզիտորին գրավել է կոմիտասյան ու, առհասարակ, հայ երաժշտությունը:

«Մի ավանդական օրորի երկու նորահայտ տարբերակ» զեկուցման մեջ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Անի Հակոբյանը** քննեց մեկ ավանդական օրորի նոր հայտնաբերված երկու արժեքավոր տարբերակ: Հետաքրքրական այս օրորի ձայնագրություններն արվել են շուրջ 60 և 40 տարի առաջ, աշխարհագրական առումով իրար հետ որևէ կապ չունեցող՝ Խորհրդային Հայաստանում և ֆրանսիական Դեսին քաղաքում:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի հայցորդ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոս **Ռուբեն Անտոնյանը** (գիտական ղեկավար՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լիլիթ Երնջակյան) «Շրջակա միջավայրն ու հնչյունները Հարություն Դելլալյանի «Topophono» կոնցերտում» զեկուցման շրջանակում բացահայտեց հայ անվանի կոմպոզիտորի նշված ստեղծագործության կապը բնության, շրջակա միջավայրի և դրա հնչողական համակարգերի հետ: Անդրադարձ կատարեց ստեղծագործության 1998 թվականի բեմականացված տարբերակին, որտեղ տարածականությունը դիտարկվում է որպես ստեղծագործության բովանդակության կարևորագույն և անբաժանելի մաս:

«Կոմիտասի անձնական գրադարանում հայտնաբերված արխիվային նյութերը» վերնագրված բանախոսության հեղինակը՝ Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Լիլիթ Հարությունյանն** ուսումնասիրեց Կոմիտասի նշումներով ձեռագիր թերթիկներից մի քանիսը և փորձեց արժևորել դրանց՝ որպես ինքնուրույն ձեռագրային միավորների, դերը Կոմիտասի արխիվում:

Իրանահայ կոմպոզիտոր, խմբավար, երաժշտական-հասարակական գործիչ Նիկոլ Գալանդերյանը հայ դասական և ժամանակակից բանաստեղծների բանաստեղծությունների հիման վրա ստեղծել է սիրերգեր կամ երգ-ռոմանսներ, հայրենասիրական երգեր, մանկական երգեր, զուգերգեր, անսամբլներ և խմբերգեր, որոնց հետազոտությանն էլ նվիրված էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի գիտաշխատող **Լիլիթ Հակոբյանի** «Վոկալ ժանրը Նիկոլ Գալանդերյանի ստեղծագործության մեջ» զեկուցումը:

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայցորդ **Անի Մուշեղյանը** (գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր Ավետիք Իսահակյան) ներկայացրեց «Հակոբոս Այվազյանի «Ձայնագրութիւն» խորագրով անտիպ ձեռնարկը» վերտառությամբ բանախոսությունը՝ նվիրված պոլսահայ երաժիշտ Հակոբոս Այվազյանի անավարտ ձեռնարկին:

«Մակար Եկմալյանը «Տարազի» էջերում (1910 թվական)» զեկուցման մեջ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի հայցորդ **Էդուարդ Ներսիսյանը** (գիտական ղեկավար՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյան) անդրադարձավ Մակար Եկմալյանին նվիրված «Տարազ»-ի հրապարակումներին և ներկայացրեց պատկերազարդ հանդեսի հիմնադիր,

խմբագիր Տիգրան Նազարյանի նախաձեռնությամբ 1910-ին «Աղբիւր-Տարազին» կից գրական-գեղարվեստական սալոնում կազմակերպված երեկույթը՝ նվիրված Մակար Եկմալյանի հիշատակին, և մանրամասն դիտարկեց այդ իրադարձության ծրագիրը և երեկույթի մասին արձագանքները:

«Արամ Քոչարյանը՝ Ալթայի ժողովրդական երաժշտության ուսումնասիրող (Ա. Քոչարյանի ծննդյան 120-ամյակի առթիվ)» զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի կրտսեր գիտաշխատող **Կարինե Հովհաննիսյանը**, ով առաջին անգամ ներկայացրեց Ա. Քոչարյանի արխիվային ֆոնդում (ԳԱԹ) պահվող ալթայական երգերի ժողովածուն և կոմպոզիտորի կողմից արված այդ երգերի՝ փողային նվագարանների համար արված մշակումները:

Արվեստագիտության թեկնածու **Գոռ Սալնազարյանը** «Բեգլար Ամիրջանի կատարողական գործունեության իրկուտսկյան էջը» զեկուցման շրջանակում արժևորեց հայ առաջին բարիտոն Բեգլար Ամիրջանի 1900-1901 թթ. իրկուտսկյան հյուրախաղերը և գիտական շրջանառության մեջ դրեց հայ բարիտոնի մասնագիտական գործունեության վերաբերյալ ժամանակակից մամուլի արձագանքները:

«Մի երգի պատմություն (նվիրվում է Ռ. Մելիքյանի ծննդյան 140-ամյակին)» բանախոսության մեջ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի մագիստրանտ **Լինդա Սարգսյանը** (գիտական ղեկավար՝ արվեստագիտության թեկնածու Մարիաննա Տիգրանյան) իր ուսումնասիրության արդյունքում բացահայտեց, որ «Զառ-վառ» վոկալ շարքում զետեղված «Գյուլ-գյուլի» երգը Ռ. Մելիքյանն իրականում ձայնագրել 1926-ին Արցախում, և այդ երգը արցախյան ֆոլկլորի արժեքավոր նմուշ է:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի հայցորդ **Գոհար Կարապետյանը** (գիտական ղեկավար՝ արվեստագիտության դոկտոր Մարգարիտա Ռուխկյան) «Տիգրան Մանսուրյանի «Հինգ բագատելը»» զեկուցման մեջ անդրադարձավ կոմպոզիտորի տրիոյի կառուցվածքային, բովանդակային և ոճական առանձնահատկություններին:

«Լիբանանահայ կոմպոզիտոր Պողոս Ջելալյանի մանկավարժական մեթոդի առանձնահատկությունները» զեկուցման մեջ Լիբանանի ֆիլհարմոնիկ նվագախմբի դիրիժոր **Կարապետ Ավեսյանը** (Լիբանան) լիբանանահայ կոմպոզիտոր Պ. Ջելալյանի սաների հետ հարցազրույցների ուսումնասիրության արդյունքում բացահայտեց Ջելալյան-մանկավարժի դասավանդման մեթոդի առանձնահատկությունները:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ: «Նոր դիտարկումներ Անիի միջնաբերդի կենտրոնագմբեթ վեցախորան եկեղեցու ճարտարապետության շուրջ» զեկուցման մեջ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի դասախոս, ճարտարապետության թեկնածու **Դավիթ Նահատակյանը,** ուսումնասիրությունների և կառույցի շինարարական ոճերի համեմատական վերլուծությունների հիման վրա առաջ քաշեց կառույցի ճարտարապետական առնվազն երկու շերտեր՝ Բագրատունիների և Զաքարյանների շրջանների:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնի գիտաշ-

խատող, ճարտարապետության թեկնածու **Հրանտ Հովսեփյանը** «Արթիկի Մարինե կամ Ս. Աստվածածին եկեղեցու վերակազմությունն ու վերականգնման խնդիրները» զեկուցման շրջանակում քննության առավ վաղ միջնադարյան եկեղեցու վերակառուցման ժամանակագրությունը, ծավալատարածական հորինվածքի յուրահատկությունները և առաջարկեց վերակազմության տարբերակը՝ մատնանշելով վերականգնման խնդիրները:

«ՀՀ մարզերի կինոթատրոնների այժմյան խնդիրները և դրանց լուծման ուղիները» թեման արծարծեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ասպիրանտ **Ռուզաննա Միքայելյանը** (գիտական ղեկավար՝ ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Քերթմենջյան) և կարևորեց մարզային կինոթատրոնների դիզայնի ու ճարտարապետության, ինչպես նաև պահպանության հրատապությանն ուղղված հարցերը:

«Նոր դիտարկումներ Հայաստանի երկհարկ գմբեթավոր կառույցների ճարտարապետական առանձնահատկությունների շուրջ» վերնագիրն էր կրում Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարանի հայցորդ **Տիգրան Գրիգորյանի** (գիտական ղեկավար՝ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Սեյրանուշ Մանուկյան) զեկուցումը, որտեղ շոշափվեց 12-14-րդ դարերի բազմահարկ գմբեթավոր կառույցների ծագման և ճարտարապետական խնդիրների մասին հեղինակի տեսակետները, միևնույն ժամանակ՝ գրավոր սկզբնաղբյուրների և հնագիտական տվյալների հիման վրա պարզաբանվեց բազմահարկ կառույցների բուն նշանակությունը, ծավալատարածական հորինվածքները:

Ուդինեի համալսարանի ասպիրանտ **Ալեսսիա Բոսքիսի** (Իտալիա) (գիտական ղեկավար՝ Ալդո Ֆեռարի) բանախոսության թեման էր «Հայաստանը և նրա գեղարվեստական ժառանգությունը Ջովաննի Ֆրանչեսկո Կարերի Ջեմելլիի աչքերով»: Հեղինակը, հետազոտելով, իտալացի ճանապարհորդ Ջիովանի Ֆրանչեսկո Ջեմելլի չուսումնասիրված և Նեապոլում հրատարակված «Ճամփորդություն աշխարհով մեկ, 1699-1700» աշխատությունը՝ գիտական շրջանառության մեջ դրեց Օսմանյան կայսրության և Սեֆյան նահանգի արևելյան շրջաններում հայկական գեղարվեստական ժառանգության առկայության, վիճակի վերաբերյալ արժեքավոր տեղեկատվություններ:

ԹԱՏՐՈՆ ԵՎ ԿԻՆՈ: «Հայկական կրկեսային կոլեկտիվի հիմնադրումը» զեկուցման մեջ Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ասպիրանտ **Հրաչ Պետրոսյանը** (գիտական ղեկավար՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Օրդոյան) կարևորեց հետպատերազմյան Հայաստանի մշակութային կյանքում առանցքային տեղ զբաղեցրած հայկական կրկեսային կոլեկտիվի ստեղծագործական գործունեության ուսումնասիրության հանգամանքը:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Անուշ Ասլիբեկյանը** «Դրամատուրգիական խոսքի պոետիկան ու բեմավիճակների առօրեականությունը Ստեֆան Բրոնշվեյգի «Ուրախության օրեր» բեմադրության մեջ» բանախոսության մեջ հատուկ շեշտեց նոր թատերական փառատոնի կայացման հարցը և

«Օդեոն»-ի Հայաստան այցը, ինչպես նաև Լիգրեի պիեսի դրամատուրգիական հնարքի կիրառության խնդիրը:

«Տիկնիկային ներկայացումների բեմադրական առանձնահատկությունները» զեկուցմամբ հանդես եկավ Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի հայցորդ **Հայրապետ Հակոբյանը** (գիտական ղեկավար՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Օրդոյան):

«Հրաչյա Ղափլանյանի ռեժիսուրան (համառոտ ակնարկ)» զեկուցման մեջ Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի հայցորդ **Ռուզաննա Առաքելյանը** (գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հենրիկ Հովհաննիսյան) ներկայացրեց հայ թատրոնի նորագույն շրջանի նշանավոր թատերական գործիչ, բեմադրիչ Հրաչյա Ղափլանյանի բեմադրական սկզբունքները: Բեմադրիչի՝ տարբեր թատրոններում իրականացրած բեմադրությունների համադրման հիման վրա երիտասարդ հետազոտողը փորձեց բացահայտել նրա ռեժիսուրայի առանձնահատկությունները:

Արվեստագիտության թեկնածու **Վերոնիկա Ժուռավլյովան** հանդես եկավ «Աշխարհի պատկերը Սերգեյ Փարաջանովի ստեղծագործության մեջ. էմպիրիկ հետազոտության փորձ» զեկուցմամբ, որը նվիրված էր Փարաջանովի ստեղծագործական ժառանգության գիտական ուսումնասիրության առանձնահատկություններին և հեռանկարներին: Հեղինակը ռեժիսորի արվեստը դիտարկեց համակարգային մոտեցմամբ, ինչը հնարավորություն ընձեռեց նկարագրել նրա կինոարվեստի գլխավոր հիմքը:

Նստաշրջանն անցավ ակտիվ քննարկումների և կառուցողական հարցադրումների առողջ մթնոլորտում: Նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին, իրենց արժեքավոր խորհուրդներով և հարցադրումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Աննա Ասատրյանը**, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Լիլիթ Երնջակյանը**, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Աննա Արևշատյանը**, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող արվեստագիտության թեկնածու **Մարիաննա Տիգրանյանը**:

Գիտական նստաշրջանի արդյունքներն ամփոփեց և եզրափակիչ խոսքով հանդես եկավ **Աննա Ասատրյանը**:

Մերի ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
արվեստագիտության թեկնածու

Մարտին ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
արվեստագիտության թեկնածու, դոցենտ